ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 61-Ա/3 «17» 02 2025

«ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-25/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հունվարի 15-ի որոշումը առ այն, որ «Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (բացակայել է աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվող ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները, բացակայել է պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից չեն շտկվել և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Ջի դիզայն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00128594, գործունեության հասցեն՝ ք Երևան, Մալխասյանց 25) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2/17/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **Հ.ՀԱԿՈԲՅԱՆ**